

Կազմված է «26» 05 2017թ.
Բաղկացած է 19 թերթից

Տպագրված է ընդամենը 2 (երկու) օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՅՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Արտահերթ համաժողովի որոշմամբ

« 23 » մայիսի 2017թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԵՒԻ ԿՈՂՄԻՑ**

«10» նոյեմբերի 2014թ.
Գրանցման թիվ 211.171.834545
Վկայական 03Ա984545
ՀՎՀՀ 0 0 1 3 8 0 2 1

10.11.2014թ. գրանցված կանոնադրության
թիվ 001-2 փոփոխությունը
գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

Կազմակերպության նախագահ

[Handwritten signature]
ստորագրություն



Կ. Համբարձումյան

« 14 » հունիսի 2017թ.



[Handwritten signature]
ստորագրություն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՅՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև հասարակական կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող իրավաբանական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրագուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով: Ասոցիացիան գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության համաձայն:
- 1.2. Ասոցիացիայի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամների շահերի ընդհանրությունը, անդամության կամավորությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:
- 1.3. Ասոցիացիան չի հետապնդում քաղաքական նպատակներ, չի հարում որևէ քաղաքական հոսանքի:
- 1.4. Ասոցիացիան գործում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5. Ասոցիացիայի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Վաղարշյան փողոց, շենք 12:
- 1.6. Կազմակերպությունը չունի անդամների քանակական սահմանափակում և գործում է անժամկետ:
- 1.7. Ասոցիացիայի աշխատանքային լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը:
- 1.8. Ասոցիացիայի անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, հայերեն կրճատ՝ «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ կամ «ՀՓՄՁՀԱ» ՀԿ, ռուսերեն լրիվ՝ «Ассоциация бухгалтеров малого и среднего предпринимательства Армении» Общественная Организация, ռուսերեն կրճատ՝ «Ассоциация бухгалтеров МСП Армении» ОО կամ «АБМСПА» ОО, անգլերեն լրիվ՝ «Association of accountants of small and middle entrepreneurship of Armenia» Non Governmental Organization, անգլերեն կրճատ՝ «Association of accountants of SME of Armenia» NGO կամ «AASMEA» NGO:

2. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1. Ասոցիացիայի նպատակներն են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝
 - ա) աջակցել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության

(այսուհետ՝ ՓՄՁ) հաշվապահական և հարկային հաշվառման համակարգի և գործունեության զարգացմանը,

- բ) ՓՄՁ ոլորտի հաշվապահների մասնագիտական-սոցիալական պատասխանատվության բարձրացմամբ նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ ՊՄԳ) զարգացմանը,
- գ) պետական, միջազգային և այլ կազմակերպություններում ստեղծված խորհուրդներում, հանձնաժողովներում և այլ մարմիններում ՓՄՁ ոլորտին վերաբերվող իրավական ակտերի, փաստաթղթաշրջանառության կամ այլ նմանատիպ հարցերի հետ առնչվող հանրային քննարկումներին ցուցաբերել ներկայացուցչական մասնակցություն և նպաստել հասարակության, մասնավորապես՝ ՓՄՁ շահերի պաշտպանմանը,
- դ) օժանդակել փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ ՖՅՄՍ) ներդրմանը,
- ե) օժանդակել ՀՀ կառավարության կողմից ՓՄՁ ոլորտին վերաբերվող հարկային հատուկ հաշվառման կանոնակարգերի մշակմանը և ներդրմանը,
- զ) նպաստել համապատասխան (մասնագիտական) միջազգային կազմակերպությունների և բնագավառի օտարերկրյա ու տեղական մասնագետների կողմից Ասոցիացիայի կրթական ծրագրերի և որակավորումների ճանաչմանը,
- է) աջակցել Ասոցիացիայի անդամների մասնագիտական հմտության և փորձառության ձեռքբերմանը,
- ը) աջակցել Ասոցիացիայի անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

2.2. Ասոցիացիայի գործունեության առարկան է՝ օրենքով սահմանված կարգով՝

- ա) մասնակցությունը հաշվապահական և հարկային հաշվառման իրավական ակտերի նախագծերի մշակմանը,
- բ) Ասոցիացիայի անդամներին Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով և մասնագիտական գրականությամբ ապահովումը,
- գ) ՓՄՁ հաշվապահների վերապատրաստման և ուսուցման դասընթացների կազմակերպումը և անցկացումը,
- դ) մասնագիտական թերթերի, տեղեկատվական թերթիկների, ամսագրերի և գրքերի հրատարակումը,
- ե) ՓՄՁ հաշվապահական և հարկային հաշվառման, ինչպես նաև դրանց հետ առնչվող բնագավառներում հետազոտական աշխատանքների իրականացումը,
- զ) Ասոցիացիայի կանոնադրական գործունեության սահմաններում իր անդամների համար իրավական, կազմակերպչական և այլ բնույթի խորհրդատվական գործառույթների իրականացումը,
- է) ՓՄՁ-ներին հաշվապահական և հարկային հաշվառման ծառայություններ մատուցողների աշխատանքային փորձի համակարգումը, վերլուծումը, ընդհանրացումը և տարածումը,
- ը) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ՓՄՁ հաշվապահական և հարկային հաշվառման ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և գործնական շփումների նպատակով գործակցությունը,
- թ) Ասոցիացիայի կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված այլ աշխատանքների իրականացումը:

- 2.3. Ասոցիացիան, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, համապատասխան դեպքերում մասնագիտական հարցերում պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցված ձևով, իր կողմից սահմանված կարգին համապատասխան իրականացնում է մասնագիտական որակավորում:
- 2.4. Ասոցիացիան կարող է իրականացնել Կազմակերպության նպատակներից բխող, սույն կանոնադրությամբ չնախատեսված, սակայն ՀՀ օրենսդրությանը չհակասող ցանկացած այլ գործունեություն:

3. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 3.1. Ասոցիացիան իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:
- 3.2. Ասոցիացիան վարում է ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում:
- 3.3. Ասոցիացիայի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթն օգտագործվում է միայն Ասոցիացիայի կանոնադրական նպատակների ուղղությամբ:

4. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

- 4.1. Պետությունն օրենքով սահմանված կարգով ապահովում է Ասոցիացիայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:
- 4.2. Ասոցիացիան իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական ծրագրերին և այլ միջոցառումների:
- 4.3. Պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց արգելվում է միջամտել կամ խոչընդոտել Ասոցիացիայի օրինական գործունեությանը:

5. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Ասոցիացիայի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման և դադարում է լուծարման ավարտի պահից:
- 5.2. Ասոցիացիան ունի օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ:

- 5.3. Ասոցիացիան՝
- 5.3.1. որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով,
 - 5.3.2. կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,
 - 5.3.3. կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
 - 5.3.4. ունի ինքնուրույն հաշվեկշիռ,
 - 5.3.5. ունի իր անվանման հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով կլոր կնիք, դրոշմ, խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է հետևյալ պատկերը՝ սև շրջանագծի ներսում տեղադրված է համեմատաբար փոքր չափի մոխրագույն շրջան: Շրջանի ներսում պատկերված է սև և սպիտակ ձեռքերի ձեռքսեղմում, իսկ վերևում՝ հավերժության նշան, որոնք խորհրդանշում են հավերժ համագործակցություն: Շրջանագծի և մոխրագույն շրջանի միջանկյալ սպիտակ հատվածի վերևի մասում գրված է “ՉՓՄՁՅԱ” հապավումը: Հապավման ձախ և աջ մասերում տեղադրված են հնգաթև աստղիկներ, որպես համամարդկային խորհրդանիշ: Աստղիկների միջև ընկած հատվածում (ձախից աջ) գրված է՝ “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱԾՎԱԴԱՊԱՅՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ”: Հապավման և բացված գրվածքում “ՓՄՁ” իրար հաջորդող տառախմբում տառերը գրված են համապատասխանաբար կարմիր, կապույտ և նարնջագույն գույներով, որոնք խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները (խորհրդանիշի պատկերը կցվում է սույն կանոնադրությանը):
- 5.4. Ասոցիացիան իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
- 5.4.1. իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող,
 - 5.4.2. բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,
 - 5.4.3. ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից,
 - 5.4.4. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,
 - 5.4.5. տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
 - 5.4.6. կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,
 - 5.4.7. օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
 - 5.4.8. համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
 - 5.4.9. կատարել օրենքով չարգելված այլ գործունեություն,

- 5.4.10. Ասոցիացիան կարող է ունենալ օրենքով սահմանված այլ իրավունքներ:
- 5.5. Ասոցիացիայի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:
- 5.6. Ասոցիացիան իրավունքներ է ձեռք բերում և իրականացնում իր կամքով և ի շահ իրեն: Ասոցիացիան ազատ է պայմանագրի հիման վրա սահմանելու իր իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:
- 5.7. Ասոցիացիան ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր իրավունքների պաշտպանության իրավունք:
- 5.8. Ասոցիացիայի գույքը, այդ թվում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի բաշխվում:

6. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

- 6.1. Ասոցիացիան կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների:
- 6.2. Ասոցիացիայի կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին:
- 6.3. Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Ասոցիացիան կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:
- 6.4. Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համաձայնություն է կամավորի և Ասոցիացիայի միջև, որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Ասոցիացիան ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:
- 6.5. Ասոցիացիան կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց:
- 6.6. Կամավորները չեն ներգրավվում Ասոցիացիայի ձեռնարկատիրական գործունեության մեջ:
- 6.7. Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1. Ասոցիացիան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնում է հաշվետվություններ:
- 7.2. Եթե Ասոցիացիայի գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Ասոցիացիան պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող

մայիսի 30-ը, կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել Ասոցիացիայի հաշվետվությունը:

- 7.3. Եթե Ասոցիացիայի գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Ասոցիացիան իրավունք ունի կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել ինչպես սույն կանոնադրության 7.2 և 7.3 կետերով նախատեսված հաշվետվությունները, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր:
- 7.4. Հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

8. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 8.1. Ասոցիացիան պարտավոր է՝
- 8.1.1. վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,
 - 8.1.2. օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի. եթե Ասոցիացիան հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Ասոցիացիայի Համաժողովի կողմից ընտրված անկախ աուդիտորի կողմից,
 - 8.1.3. պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,
 - 8.1.4. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,
 - 8.1.5. Ասոցիացիայի անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Ասոցիացիայի կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, Համաժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,
 - 8.1.6. Ասոցիացիայի կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,

8.1.7. իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Ասոցիացիայի Նախագահի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

8.1.8. կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

8.2. Ասոցիացիայի մարմինները նրա անուկից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Ասոցիացիայի:

9. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Ասոցիացիան իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով՝ օրենքով սահմանված կարգով:

9.2. Ասոցիացիան պատասխանատվություն չի կրում պետության պարտավորությունների համար, ինչպես որ պետությունը պատասխանատվություն չի կրում Ասոցիացիայի պարտավորությունների համար:

9.3. Ասոցիացիան պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, ինչպես որ վերջիններս պատասխանատվություն չեն կրում Ասոցիացիայի պարտավորությունների համար:

9.4. Եթե Ասոցիացիան իր անօրինական գործունեությամբ վնաս է հասցրել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց, պարտավոր է այն հատուցել իր գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կարգով:

10. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

10.1. Ասոցիացիայի անդամ դառնալը կատարվում է կամավորության սկզբունքով:

10.2. Ասոցիացիայի անդամ օրենքով սահմանված կարգով կարող են լինել բարձրագույն կրթություն ունեցող կամ անդամության դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին երեք տարվա ընթացքում առնվազն մեկ տարվա հաշվապահի մասնագիտական փորձ ունեցող կամ Ասոցիացիայի կողմից որակավորում ստացած ՀՀ կամ օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև հասարակական կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող իրավաբանական անձինք, որոնք ընդունում են Ասոցիացիայի կանոնադրությունը և իրենց գործունեությամբ նպաստում են Կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործմանը:

10.3. Մինչև տասնչորս տարեկան անձը Ասոցիացիայի անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

10.4. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Ասոցիացիայի անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

10.5. Անկախ սույն կանոնադրության 10.2 կետի պայմաններին բավարարելուց Ասոցիացիայի անդամ չեն կարող լինել այն անձինք, ովքեր,

- դատարանի վճռով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրանց դատվածությունը մարված կամ հանված չէ,

- Նախկինում հեռացվել են Ասոցիացիայի անդամությունից:
- 10.6. Ասոցիացիայի յուրաքանչյուր անդամ (պատվիրակ) համաժողովում ունի մեկ ձայնի իրավունք, ինչը որևէ կերպ չի կարող փոխանցվել այլ անդամի (պատվիրակի):
 - 10.7. Ասոցիացիայի անդամի ընդունելությունը կատարվում է դիմողի գրավոր դիմումի համաձայն (իրավաբանական անձի դեպքում՝ տվյալ իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշման հիման վրա), Խորհրդի կամ Նրա կողմից լիազորված մասնագիտական հանձնաժողովի կամ Ասոցիացիայի սկզբնական կազմակերպության որոշմամբ՝ Խորհրդի կողմից սահմանված ընթացակարգին համապատասխան:
 - 10.8. Ասոցիացիայի անդամներին տրվում է համապատասխան նշումով վկայական, որի ձևը հաստատվում է Խորհրդի կողմից,
 - 10.9. Ասոցիացիայի անդամը իրավունք ունի անարգել դուրս գալ Ասոցիացիայի անդամությունից՝ իր գրավոր դիմումի համաձայն (իրավաբանական անձի դեպքում՝ տվյալ իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշմամբ): Դիմումը (Որոշումը) ներկայացնելու օրվանից Ասոցիացիայի անդամի անդամակցությունը Ասոցիացիային համարվում է դադարած:

11. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԿԱՐԳԸ

- 11.1. Ասոցիացիայի անդամներն անդամագրվելիս մուծում են մուտքի վճար, այնուհետև՝ տարեկան անդամավճար: Ասոցիացիայի անդամների մուտքի վճարի և տարեկան անդամավճարի չափերը սահմանվում են Խորհրդի կողմից:
- 11.2. Մուտքի վճարը, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով, մուծվում է անդամագրվելու մասին դիմումները ներկայացնելու հետ միաժամանակ: Դիմումների մերժման դեպքում մուտքի վճարը հետ է վերադարձվում՝ մերժման որոշում կայացվելուց հետո հնգօրյա ժամկետում:
- 11.3. Ասոցիացիայի յուրաքանչյուր տարվա տարեկան անդամավճարի գումարը անդամների կողմից պետք է վճարվի մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը ներառյալ՝ ամբողջությամբ: Մինչև սահմանված ժամկետը տարեկան անդամավճարը ամբողջությամբ չվճարելու դեպքում անդամներին այդ մասին 15 օրյա ժամկետում ծանուցվում է պատշաճ ձևով՝ (կատարվում է հիշեցում) պատվիրված նամակով կամ այլ եղանակով:
- 11.4. Պատշաճ ձևով ծանուցումից (հիշեցումից) հետո երեսուկօրյա ժամկետում անդամների կողմից տարեկան անդամավճարների գծով պարտքը ամբողջությամբ չմարելու դեպքում նրանց անդամությունը Ասոցիացիային համարվում է դադարած:
- 11.5. Ասոցիացիային նոր անդամագրված անդամների տարեկան անդամավճարի գումարը հաշվարկվում է Խորհրդի կողմից անդամագրվելու վերաբերյալ համապատասխան որոշումն ընդունելուն հաջորդող ամսվանից՝ մինչև տվյալ տարվա ավարտը ընկած ժամանակահատվածի համար՝ համապատասխան համամասնությամբ: Նոր անդամագրված անդամը տվյալ տարվա տարեկան անդամավճարի գումարը պետք է վճարի մինչև անդամակցության որոշումն ընդունելուն հաջորդող ամսվա վերջը:
- 11.6. Ասոցիացիային անդամությունը որևէ պատճառով դադարեցրած (հեռացված) անձանց նրանց մուծած մուտքի վճարները և անդամավճարները հետ չեն վերադարձվում:

12. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 12.1. Ասոցիացիայի անդամն իրավունք ունի՝ պատվիրակել և պատվիրակվել Ասոցիացիայի բարձրագույն մարմնում, ընտրել և ընտրվել Ասոցիացիայի ղեկավար և վերահսկողությունն իրականացնող մարմիններում, ներկա գտնվել Ասոցիացիայի համաժողովին, եթե վերջինս անցկացվում է Ասոցիացիայի անդամների պատվիրակների կազմով, իսկ ինքը պատվիրակ չի ընտրվել:
- 12.2. Ասոցիացիայի անդամներն իրավունք ունեն՝
- 12.2.1. Ասոցիացիայի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Ասոցիացիայի կառավարման կամ վերահսկողությունն իրականացնող մարմիններում,
 - 12.2.2. ներկա լինել համաժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Ասոցիացիայի խորհրդի նիստերին,
 - 12.2.3. ծանոթանալ Ասոցիացիայի մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,
 - 12.2.4. Ասոցիացիայի մարմինների որոշումները բողոքարկել Ասոցիացիայի վերադաս մարմիններ՝ 60 օրվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ իմացել են կամ պարտավոր էին իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Ասոցիացիայի անդամների կողմից բողոքները վերադասության կարգով ներկայացվում են գրավոր,
 - 12.2.5. Ասոցիացիայի մարմինների (այդ թվում՝ բարձրագույն մարմնի) որոշումները, որոնք ընդունվել են օրենքի, Ասոցիացիայի կանոնադրության կամ վերադաս մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ կամ ոտնահարել են Ասոցիացիայի կամ Ասոցիացիայի անդամների իրավունքներն ու օրինական շահերը, կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել Ասոցիացիայի անդամի, անդամության թեկնածուի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Ասոցիացիայի անդամը իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ,
 - 12.2.6. Ասոցիացիայից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Ասոցիացիայի կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,
 - 12.2.7. Ասոցիացիայից ստանալ մասնագիտական օժանդակություն՝ իրենց օրինական շահերի պաշտպանության համար, ինչպես նաև՝ այլ համապատասխան օգնություն,
 - 12.2.8. մասնակցել Ասոցիացիայի համաժողովին և Ասոցիացիայի կողմից կազմակերպված ընդհանուր բնույթի այլ միջոցառումներին,
 - 12.2.9. լինել այլ կազմակերպությունների անդամ,
 - 12.2.10. Ասոցիացիայի նախագահի որոշմամբ՝ անվճար օգտվել Ասոցիացիայի խորհրդատվական, տեղեկատվական և այլ ծառայություններից:
- 12.3. Ասոցիացիայի անդամները պարտավոր են՝

- 12.3.1. կատարել Ասոցիացիայի կանոնադրության պահանջները, ինչպես նաև համաժողովի և Խորհրդի որոշումները,
 - 12.3.2. հոգ տանել Ասոցիացիայի հեղինակության բարձրացման համար,
 - 12.3.3. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով մուծել անդամավճար,
 - 12.3.4. բարեխղճորեն կատարել Ասոցիացիայի կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
 - 12.3.5. պահպանել Ասոցիացիայի առևտրային և այլ գաղտնիքները:
 - 12.3.6. պահպանել շարունակական մասնագիտական զարգացման կանոնակարգի պահանջները:
- 12.4. Ասոցիացիայի անչափահաս անդամների իրավունքների և պարտականությունների առանձնահատկություններ սույն կանոնադրությամբ չեն սահմանվում: Ասոցիացիայի անչափահաս անդամներն ունեն Ասոցիացիայի անդամների համար սույն կանոնադրությամբ սահմանված բոլոր իրավունքները և կրում են բոլոր պարտականությունները, բացառությամբ` Ասոցիացիայի կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի:
 - 12.5. Ասոցիացիայի կանոնադրությունը խախտող Ասոցիացիայի անդամների նկատմամբ համաժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ` ընդհուպ մինչև Ասոցիացիայի անդամությունից հեռացումը:
 - 12.6. Ասոցիացիայի անդամությունից հեռացնելու մասին Ասոցիացիայի Խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել համաժողովին:

13. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 13.1. Ասոցիացիայի կառավարման մարմիններն են համաժողովը և Խորհուրդը:
- 13.2. Ասոցիացիայի գործադիր մարմինն է Ասոցիացիայի Նախագահը:
- 13.3. Ասոցիացիայի վերահսկողություն իրականացնող մարմինն է վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգիչը):
- 13.4. Ասոցիացիայի բարձրագույն մարմինը նրա անդամների (պատվիրակների) համաժողովն է, որն ունի Ասոցիացիայի գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք: Ասոցիացիայի ղեկավար մարմիններն են Խորհուրդը և Նախագահը:
- 13.5. Ասոցիացիայի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) կողմից:
- 13.6. Ասոցիացիայի հերթական համաժողովը հրավիրվում է 4 (չորս) տարին մեկ անգամ, սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով, Ասոցիացիայի Խորհրդի կողմից, դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ` կազմելով համապատասխան արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից:
- 13.7. համաժողովի անցկացման և Խորհրդի կողմից սահմանված համամասնությամբ Կազմակերպության անդամներից ընտրված պատվիրակների` համաժողովին մասնակցության կարգերը սահմանվում են Խորհրդի կողմից:

- 13.8. Ասոցիացիայի հերթական համաժողովի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին անդամներին, անդամության թեկնածուներին ծանուցվում է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ այլ պատշաճ եղանակով, սակայն ոչ ուշ, քան համաժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ:
- 13.9. Ասոցիացիայի արտահերթ համաժողով հրավիրվում է անդամների մեկ երրորդի կամ վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) պատճառաբանված պահանջի դեպքում, ոչ ուշ քան հինգ օրվա ընթացքում: Արտահերթ համաժողովի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական համաժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով՝ համաժողովի անցկացման օրվանից առնվազն հինգ օր առաջ:
- 13.10. Համաժողովի անցկացման կոնկրետ ձևը (դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով՝ կամ հեռակա կարգով հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ, կամ պատվիրակների մասնակցությամբ) որոշում է խորհուրդը, իսկ արտահերթ համաժողով հրավիրելու դեպքում՝ արտահերթ համաժողովի հրավիրում նախաձեռնող կողմը:
- 13.11. Համաժողովի բացառիկ իրավասությունն է՝
- 13.11.1. կատարել Ասոցիացիայի կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատել կանոնադրությունը,
 - 13.11.2. ստեղծել այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունել այլ կազմակերպությունում Ասոցիացիայի մասնակցության մասին,
 - 13.11.3. հաստատել Ասոցիացիայի կառուցվածքը,
 - 13.11.4. որոշումներ ընունել Ասոցիացիայի նախագահի, խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) ընտրության կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին,
 - 13.11.5. ընտրել Ասոցիացիայի աուդիտոս իրականացնող անձին (աուդիտորին), եթե Ասոցիացիան օրենքով պահանջի համաձայն ենթակա է պարտադիր աուդիտի,
 - 13.11.6. հաստատել Ասոցիացիայի ռազմավարությունը,
 - 13.11.7. առնվազն չորս տարին մեկ հաստատել նախագահի կողմից համաժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Ասոցիացիայի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
 - 13.11.8. դադարեցնել Ասոցիացիայի մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
 - 13.11.9. ընդունել որոշում Ասոցիացիայի վերակազմակերպման մասին,
 - 13.11.10. ընդունել որոշում Ասոցիացիայի լուծարման մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարման դեպքերի,
 - 13.11.11. իրականացնել օրենքով նախատեսված այլ լիազորություններ:
- 13.12. Օրենքով և սույն կանոնադրությամբ համաժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, կողմ է քվեարկել Ասոցիացիայի բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների (եթե համաժողովն անցկացվում է անդամների, պատվիրակների կազմով) կեսից ավելին: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են համաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

- 13.13. Համաժողովն իրավագոր է, եթե նրան, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, մասնակցում են Ասոցիացիայի բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների կեսից ավելին:
- 13.14. Եթե համաժողովում քննարկվում է համաժողովի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա համաժողովի տվյալ մասնակիցը քվեարկությանը չի մասնակցում:
- 13.15. Համաժողովի ընթացքի արձանագրման փաստաթղթերը պահպանվում են առնվազն հինգ տարի:
- 13.16. Խորհուրդն ընտրվում է համաժողովի կողմից 4 (չորս) տարի ժամկետով: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք իրավիրվում են ոչ պակաս քան յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ:
- 13.17. Խորհրդի անդամների մեկ երրորդի կամ Ասոցիացիայի նախագահի պահանջով կարող են հրավիրվել նաև Խորհրդի արտահերթ նիստեր:
- 13.18. Խորհուրդը`
- 13.18.1. առաջարկություններ է ներկայացնում համաժողովին` նրա բացառիկ իրավասությանն առնչվող հարցերի լուծման վերաբերյալ,
 - 13.18.2. ընդունում է Ասոցիացիայի անդամ, եթե այդ գործառույթը չի լիազորված մասնագիտական հանձնաժողովին կամ Ասոցիացիայի սկզբնական կազմակերպությանը, հեռացնում է Ասոցիացիայի անդամությունից,
 - 13.18.3. Ասոցիացիայի անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և տույժի միջոցներ,
 - 13.18.4. վարում է Ասոցիացիայի ընթացիկ գործունեությունը համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,
 - 13.18.5. սահմանում է Ասոցիացիայի մուտքավճարի և անդամավճարի չափը,
 - 13.18.6. ստեղծում է մասնագիտական հանձնաժողովներ, հաստատում է հանձնաժողովների գործունեության մասին հիմնական դրույթները, ինչպես նաև դրանց կանոնադրությունները, ստեղծում և լուծարում է առանձնացված ստորաբաժանումներ, հիմնարկներ, մասնագիտական հանձնաժողովներ, սկզբնական կազմակերպություններ (որոնք ստեղծվում են հանրապետության համայնքներում և Երևան քաղաքի վարչական շրջաններում) հաստատում է դրանց կանոնադրությունները, նշանակում է դրանց ղեկավարներին,
 - 13.18.7. ընդունում է որոշումներ Ասոցիացիայի պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին:
- 13.19. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:
- 13.20. Խորհրդի որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:
- 13.21. Վերստուգիչ հանձնաժողովի անդամը (վերստուգիչը) և մասնագիտական հանձնաժողովի նախագահը կարող են մասնակցել Խորհրդի նիստերին Խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 13.22. Խորհրդի անդամի լիազորությունները ժամկետից շուտ համարվում են դադարած Խորհրդին անդամությունը դադարեցնելու իր դիմումի հիման վրա, օրենքով կամ սույն

կանոնադրության հիման վրա Ասոցիացիային անդամակցությունը դադարելու, ինչպես նաև Խորհրդի նիստերին մեկ տարվա ընթացքում երկու անգամ անհարգելի՝ առանց պատշաճ ձևով նախօրոք տեղյակ պահելու, բացակայության դեպքում:

13.23. Ասոցիացիայի նախագահին ընտրվում է համաժողովի կողմից 4 (չորս) տարի ժամկետով: Նա ի պաշտոնե հանդիսանում է Խորհրդի նախագահը: Նախագահը կարող է ունենալ երկու տեղակալներ, որոնք ընտրվում են Խորհրդի կազմից՝ Խորհրդի որոշմամբ, Խորհրդի լիազորությունների ժամկետով:

13.24. Ասոցիացիայի նախագահը՝

13.24.1. ապահովում է համաժողովի կամ Խորհրդի որոշումների կատարումը,

13.24.2. հանդես է գալիս Ասոցիացիայի անունից առանց լիազորագրի, հրավիրում է Խորհրդի նիստեր և նախագահում դրանք,

13.24.3. տնօրինում և կառավարում է Ասոցիացիայի ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ասոցիացիայի անունից,

13.24.4. ներկայացնում է Ասոցիացիան Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

13.24.5. տալիս է լիազորագրեր,

13.24.6. բանկերում բացում է Ասոցիացիայի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

13.24.7. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

13.24.8. հաստատում է Ասոցիացիայի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

13.24.9. հաստատում է Ասոցիացիայի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

13.24.10. կորրոկցիաներում է Խորհրդի, իր տեղակալների գործունեությունը, ինչպես նաև ապահովում է նրանց և վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) համագործակցությունը,

13.24.11. հաստատում է Ասոցիացիայի, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

13.24.12. համաժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատում է Ասոցիացիայի տարեկան գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները, որոնք առնվազն չորս տարին մեկ անգամ ներկայացնում է համաժողովի հաստատմանը: Ասոցիացիայի գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները համաժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) և (կամ) անկախ աուդիտի եզրակացության հետ մեկտեղ,

13.24.13. կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը և ստորագրում դրանք,

13.24.14. իրականացնում է համաժողովի ու Խորհրդի կողմից տրված այլ լիազորություններ,

- 13.24.15. Ասոցիացիայի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է Ասոցիացիայի նախագահի տեղակալներից մեկը՝ Ասոցիացիայի նախագահի որոշմամբ: Ասոցիացիայի նախագահի տեղակալներն իրականացնում են նախագահի հանձնարարություններն ու հրամանները՝ վերահսկելով դրանց կատարման ընթացքը: Ասոցիացիայի նախագահի տեղակալներին համաժողովի, Խորհրդի և նախագահի կողմից կարող են տրվել սույն կանոնադրությանը չհակասող այլ լիազորություններ:
- 13.25. Իրենց չարդարացրած Ասոցիացիայի բոլոր ընտրովի պաշտոնատար անձինք կարող են ժամկետից շուտ հետ կանչվել իրենց ընտրողների կողմից:
- 13.26. Սույն կանոնադրությամբ և Ասոցիացիայի մարմինների համապատասխան որոշումներով սահմանված պարտականությունները բարձր մակարդակով կատարելու դեպքում Ասոցիացիայի նախագահը, Խորհրդի անդամները, վերստուգիչ հանձնաժողովի անդամները (վերստուգիչը), ինչպես նաև մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկված անձինք կարող են պարգևատրվել: Պարգևատրության չափը և ձևը սահմանում է Խորհուրդը: Ընդ որում, տվյալ տարվա պարգևատրությունների ընդհանուր չափը չի կարող գերազանցել Ասոցիացիայի տվյալ տարվա բյուջեով նախատեսված ծախսերի ընդհանուր գումարի 5%-ը:
- 13.27. Անձը, որն օրենքի կամ սույն կանոնադրության ուժով հանդես է գալիս Ասոցիացիայի անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ Ասոցիացիայի: Նա պարտավոր է Ասոցիացիայի Խորհրդի պահանջով հատուցել իր կողմից Ասոցիացիային պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

14. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- 14.1. Ասոցիացիայի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգիչը):
- 14.2. Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգիչը) ընտրվում է համաժողովի կողմից 4 (չորս) տարի ժամկետով՝ բաղկացած 3 անդամից (1 անդամից): Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:
- 14.3. Վերստուգիչ հանձնաժողովի կազմից դուրս եկած անդամին փոխարինում է հերթական համաժողովում առավելագույն ձայներ հավաքած հաջորդ վերստուգիչ հանձնաժողովի անդամի թեկանածուն՝ մնացյալ ժամանակահատվածի համար:
- 14.4. Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան երկու անգամ: Վերստուգիչ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի կամ Ասոցիացիայի նախագահի պահանջով կարող են հրավիրվել նաև վերստուգիչ հանձնաժողովի արտահերթ նիստեր:
- 14.5. Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովը որոշումներն ընդունում է հանձնաժողովի բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկողությունն իրականացնող մարմինը վերստուգիչն է՝ նա որոշումներ է կայացնում միանձնյա:
- 14.6. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգիչը) իրավասու է՝

- 14.6.1. տարին մեկ անցկացնել Ասոցիացիայի ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,
- 14.6.2. ծանոթանալ Ասոցիացիայի գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնել նրա մարմիններին: առաջարկությունները ներկայացվում են գրավոր, որոնց վերաբերյալ Ասոցիացիայի մարմինները պարտավոր են 10 աշխատանքայի օրվա ընթացքում ներկայացնել գրավոր պատասխաններ,
- 14.6.3. պահանջել և ստանալ Ասոցիացիայի գործունեության վերաբերյալ տեղեկություններ:
- 14.6.4. համաժողովին ներկայացնելու նպատակով տալ եզրակացություն Ասոցիացիայի գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների վերաբերյալ, ինչպես նաև վերահսկել Ասոցիացիայի մարմինների գործունեությունը,
- 14.6.5. իրականացնել Ասոցիացիայի կանոնադրությամբ կամ համաժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 14.7. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգիչը) իրավասու է Ասոցիացիայի պաշտոնատար անձանցից ու աշխատողներից պահանջել և ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկատվություն:
- 14.8. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգիչը) պարտավոր է իր հաշվետվությունը ներկայացնել համաժողով՝ Ասոցիացիայի գործունեության արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների մասին: Վերստուգիչ հանձնաժողովի կազմում (վերստուգիչ) չեն կարող ընտրվել Ասոցիացիայի այլ մարմիններում ընդգրկված անդամները:
- 14.9. Ասոցիացիայի ղեկավար և վերահսկողությունն իրականացնող մարմինների անդամ կարող է դառնալ միայն 18 տարին լրացած անձը:

15. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՅԻՄՆԱՐԿՆԵՐԸ

- 15.1. Ասոցիացիան իր կանոնադրական նպատակները և խնդիրներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ:
- 15.2. Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումներն իրավաբանական անձ չեն, կարող են օժտվել գույքով՝ Ասոցիացիայի կողմից և գործում են վերջինիս կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:
- 15.3. Ասոցիացիայի առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ հիմնադրելու իրավունք ունի խորհուրդը, որն էլ հաստատում է նրանց կանոնադրությունները:

16. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 16.1. Ասոցիացիայի գույքը հանդիսանում է Ասոցիացիայի սեփականությունը:
- 16.2. Ասոցիացիայի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց: Ասոցիացիայի սեփականության ներքո գտնվող գույքի քանակն ու արժեքը չի սահմանափակվում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

- 16.3. Ասոցիացիայի սեփականությունը գոյանում է անդամների ներդրումներից, մուտքի վճարներից, անդամավճարներից, դրամաշնորհներից, նվիրատվություններից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցներից, պետական բյուջեից դրամական մուտքերից և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից: Ասոցիացիայի անդամների կողմից սեփականության իրավունքով Ասոցիացիային հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Ասոցիացիայի սեփականությունն է:
- Ասոցիացիայի հիմնադիրները և անդամները Ասոցիացիային՝ որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարների) նկատմամբ իրավունքներ չունեն:
- 16.4. Ասոցիացիան իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 16.5. ՀՀ տարածքում Ասոցիացիայի սեփականությունը գտնվում է ՀՀ պաշտպանության ներքո:
- 16.6. Ասոցիացիայի սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

17. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 17.1. Ասոցիացիայի վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է վերջինիս համաժողովի որոշման հիման վրա կամ դատական կարգով:
- Ասոցիացիան համարվում է վերակազմակերպված, բացառությամբ միացման ձևի, նոր առաջացած կազմակերպության՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
- 17.2. Ասոցիացիան այլ կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպվելիս, վերջիններս համարվում են վերակազմակերպված-միացված՝ կազմակերպության գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

18. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

- 18.1. Ասոցիացիայի լուծարումը հանգեցնում է դրա գործունեության դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցվելու: Ասոցիացիան համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, նրա գործունեության դադարման պետական գրանցման պահից:
- 18.2. Ասոցիացիան կարող է կամավոր լուծարվել համաժողովի որոշմամբ:
- 18.3. Ասոցիացիայի հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:
- 18.4. Ասոցիացիայի լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 18.5. Ասոցիացիայի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

- 18.6. Ասոցիացիայի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով:
- 18.7. Պետական լիազորված մարմինը կարող է Ասոցիացիան լուծարելու պահանջով դիմել դատարան, եթե Ասոցիացիան թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:
- 18.8. Ասոցիացիան կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: